

թիւնը հակառակ քաղկեղոնականին՝ Այս թուղթն ալ վկայ մ'է Աղուանից բաժանման, որ յիշեալ սակաւաթիւ անձերէն զատ — որոց վախճանը չենք գիտեր — կը շարունակէր մնալ: Եւ Տէր Մկրտչեան կը սխալէր՝ կարծելով թէ աղուանական խընդիրն «Աբրահամի օրով վերջացաւ»: Ասոր մասէն երկու տարի վերջ՝ 617ին՝ Տիգրանի ժողովին մէջ Վիրք և Աղուանք քաղկեղոնիկ կը ներկայանան դեռ՝, իսկ Վրացիք նոյնպէս մնացին միշտ, ինչպէս ժ դարուն կը վկայէ Ռիստանէս՝, և առնոց պատմութիւնն ինքնին:


Աղուանից բաժանման քաջալեր մ'էր Երուսաղեմի արքեպիսկոպոսն Յովհաննէս, որոյ թուղթն առ Աբաս յիշեցինք վերեւ: Նա կը գատապարտէր Հոն Հայոց Ձեռնարկը՝, և առ Աղուան նամակը՝, «զոր առաքեալ իսկ էր, կ'ըսէ, ի ձեռն աշխարհոյ, զի որդայթեացն զձեզ յիւրեանց կուրուստն»: Այդ գրերը յանձնուշը, կը յարէ, «ուսոյց զմեզ վասն բարեւէր կամաց երանութեան ըստ, եթէ ընդ բարեւոյ ճանապարհ հաւատոյ և գործոյ ընթանաս, զոր մեր լուեալ՝ յոյժ ուրախ եղաւ: Բայց լուեալ՝ թէ ոմանք յիշխանութեանդ ըսումէ ընկալան զայնպիսի սնտոյ և ստեղծական բանս խաբէութեան, և սրբութիւնդ ըսող էլ ի վերայ նոցա՝: Կը պատուիրէ անոր՝ թէ «դու իմով հրամանաւ զհերձուածողսդ հան, և զվանդ ուղղափառաց տուր»: Կը դառնայ հաւատոց վրայ, յորդորելով պինդ փարիլ Եկեղեցւոյ ու Պետրոսի, զոր Քրիստոս դրաւ «զուրկ առաքելոց, տալով նմա զզլխատուութիւն հաւատոյ անշարժութեան եկեղեցեաց», որուն կը հետին՝ կ'ըսէ՝ ցայսօր վարդապետք Եկեղեցւոյ, «մանաւանդ սուրբ և զլխատուր և պատուական աթոռոյն նորա ժառանգորդք (Հռովմայ հայրապետք)՝ ուղիղ հաւատովը անսխալ ըստ տէրունական ծայնին, որպէս յառաջագոյն ասացաք, որոց

հօտք են այսոցրիկ»: Յետոյ ընդարձակօրէն կը բացատրէ երկուց բնութեանց վարդապետութիւնը:

Այսպէս ուրեմն կ'աւարտէր բաժանման գործը: Եւ մեր հակաքաղկեղոն կուսակցութիւնը, անջատուած տիեզերական Եկեղեցիէն, դրացիներէն, և նոյն իսկ իրենց արեւմտեան եղբայրներէն, որոց հովուապետ կը մնար Յովհան կաթողիկոս, կ'ամփոփուէր Պարսկահայաստանի մէջ, ու կը սկսէր ապրիլ իւր կղզիացած նոր և անմիաթար զոյութիւնը, խոտոռ նայելով ամբողջ քրիստոնեայ աշխարհի դէմ:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ



Ժ. ՅԱՅՍՄԱՌՈՒՐԲ ԵՒ ՍԵՄԵՆՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Մայրավանաց Ձեռագրատան Բ. Ջ. դարանին մէջ թիւ 402 ձեռագիրն է մի մեծ Յայտաւորք, որ գրուած է Ռձիթ թուականին զաղափարուած ՊՂԳ թուականին գրուած ձեռագրէ մը:

Կը բովանդակէ 534 թուից, իր երկայնքն է 36, 20 հմ. և լայնքը 26 հմ. երկիշան է և բոլորգիր. թուղթ է և ոչ մագաղաթ՝ կազմը՝ տախանի կաշեպատ. առաջին գրիչ՝ Մեսրոպ Ժառանայ և երկրորդը՝ Ղազար սարկաւազ:

Յայտաւորքս կը պատկանի կիլիկեան յայտաւորաց մասնաճիւղին, որովհետեւ սրբոց կարգադրութիւնք յարմարցուած են լատին եկեղեցւոյ սուրբերուն և տարւոյն ամէն օր ընծայուած է սուրբի մը կամ այլեայլ սրբոց տօնախմբութեանց:

Մեր վանատան Ձեռագրացոցակը (էջ 333) այսչափ ինչ կը նշանակէ. Ժ. Յայտաւորք. ի Գանջայ ի գեօղն Քարահատ Ռձիթ. բոլորգիր, որոյ բնագիրն գրեալ ասի ի թուիս ՊՂԳ:

Ձեռագիրս ունի իւր մէջ երկու գունաւոր խորաններ մեծ լուսանցազարդերով, իսկ բովանդակութեան մէջ կան բազմաթիւ թռչնանկարք, ծաղկազարդեր և այլ պէսպէս գունաւոր միջին լուսանցազարդեր:

Իր յիշատակարանին մէջ մեծամեծ բարեկարգութիւններ կ'ընծայէ և դրուատիքներ կու տայ Սիմէոն Բարեւապետին վրայ, կ'ըսէ՝ ամենայն զովութեանց արժանի, սուրբ, քաջ հեղատոր: Ասոր խնդրանքովն է, որ «Տէր Ստեփանոս որդի մեծափառ իշխանին իւսնէին Որոտնեցւոյ երեք

1. Գր. քրդոց, 196, Թիւր. Արտ. 1896, 477, ամբողջ. Ուստ. Բ, Խթ, համառոտեալ: — 2 Արտ. 444: — 3. ՍԿ. 191, — 4. Ուստ. Բ, 108, — 5. Աստ. 406: — 6. Գր. քրդոց, 196: — 7. Արտ. 1896, 252-56:

ի Սոյոյ յաստուածաբանակ ուխտն եւստաթէի սուրբ առաքելոյն (յայտմաւուրքը, որմէ զաղափարուած է վերոյիշեալը). և մեծ վարդապետն մեր քաջ եկլիսեաստեւ Հայոց՝ Սիմէոն՝ ստացող սորին բազում աշխատութեամբ և երթեկեկութեամբ բերել ետ ի գաւառն Արարատեան... և բազում ծախիւք գրել ետ յիշատակ իւր և ծնողաց իւրոց։ Արդ գրեցաւ օրինակ սորին ի թուաբերութեան հայկազեան տօմարի ՊԳԳ, ի հայրապետութեան Գրիգորի Աթոռակ(ալ)ի ի Սուրբ Եշմթածնին վերստին նորոգելոյ, և յաշխարհակալութեան կորովի և յաղթող Զահանշահի Միդդին որդւոյ մեծին Յուսեփին ի մեծաստեան յԱլիւիական, ընդ հոս վանեաւ հրաշափառ սուրբ լուսոյ մօր կաթուղիկէ սուրբ Աստուածածնին, ներկեալ արեամբ կենարարին զեղարդեանն և սրբոց, որ անդ հաւաքեալ կան։ Այլ և աստանոր աղաչեմք զամենեսեան պատահօք սուրբ տառիս յիշեցէք ստացող օրինակ սորին... զմեծ վարժապետն Հայոց զՍիմէոն, որ յայնմ ժամանակի փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրև զարեգակն ։

Յիշատակարանս կը պատմէ հետեւեալ կերպով վարդապետիս գործերը։ Սիմէոն կը բնակի Եղիվարդ գիւղի փոքր վանքի մը մէջ։ Օգնութեամբ բարեպաշտ ազատածին Առնաբեզ պէկին և, ասոր որդւոց Աւագին և Զաքարիային կը հաւաքէ բազում կրօնաւորներ և կ'աշակերտէ եկեղեցւոյ մանուկներ և կ'ուսուցանէ հին և նոր Աստուածաշունչը և արտաքին փիլիսոփայութիւն տաք տարիներ։ Այս կը փափագի երթալ Երուսաղէմ, բայց ճանապարհին տկարանալով՝ կը դառնայ Արիվանքը, կ'ապրի առաջին սուրբ հարց նման, ամէն օր 150 սաղմոսներն ըսելով և կատարելով «զաստուածային պատարագն ի չաբաթ և ի կիրակէի և յամենայն մեծամեծ տօնի»։ Յիշատակ կը թողու պայծառ ժամատեղերուն «ա. Աստուածաշունչ, ա. տօնապահ և ա. այտմաւուրք» և քիչ ժամանակ մնալով անդ՝ կ'երթայ կը բնակի Յազակ վանք ուխտը և զոտեաց աշխարհին մէջ կը մտնէ բարեկարգութիւններ։ Վասն զի շատ անկարգութիւններ սարդեր էին. վասն զի ազգակցութիւն, կնքատրութիւն և խնամութիւն անխտիր կը կատարէին, Դաւթի սաղմոսը պակասեր էր և շարականները բազմացեր էին. քահանաները կը զարդարուէին զանազան զգեստներով և կը գօտնաբերուէին իբրև այլազգի. ու արեանները թողւով վանքեր և անապատներ՝ գեղերու մէջ կը բնակէին։ Սիմէոն զամէնք ուղղութեան յորդոսն և քաղցրուսոյց վարդապետութեամբ առաջ-

նորոգեց գիրոնք։ Կանոն և օրէնք դրաւ, որ արեւդայն վանքերը բնակին իրենց բրդեղէն, մաշկեղէն կամ մազեղէն հանդերձով։ Աշխարհի երեցները պահքի ժամանակ գինի չխմէին, ձէթ չուտէին և կապուտ փառթեն զլուսինին և քնք. սաղմոսները երգեն ընկերներով եկեղեցւոյ մէջ. երեք յիսնակը պահգով անցնեն և եօթը խորհուրդները կատարեն պատարագով։ Աբեղաները միաբան երգեն ը. կանոն սաղմոսը. երեք յիսնակին պահք պահեն շաբաթն ու կիրակէն։ Իսկ պատարագող արեղաները և ճշնաւորները բոլոր յիսնակը պահեն և պատարագ մատուցած օրը ը. կանոնը անխափան ըսեն, և գինի ու միս չուտեն այն օրը՝ առաջին հայրերուն նիմանելով։ Վանքերուն սահմանն և կարգը ուղղեց առաջինին պէս. պէտք է ըլլան միախորհուրդ, միաբան, և միազործ երեք տեղերու մէջ, այսինքն է, ժամատեղոյն, հացատեղոյն և բանատեղոյն մէջ. եկեղեցւոյ առաջին որդաց հնազանդ ըլլան և առանց հրամանի կրօնաւորը վանքէն չելլէ և է գործի համար, «սանամայր մի արասցէ և քոյրաքոյր ի մայրաքոյր», և այլն։

Երբ նա և այլ կանոնաւորութիւններ կ'ուզէր մտցնել՝ կ'ընէ յիշատակարանը՝ եհաս հրաման յարարչէն կոչել զվարդապետն առ ինքն ի թուիս ՊՀԵ, և մնաց գիրքն թերատ ամս բազում(ս). առաջինն գրեալ եղև ձեռամբ սրբաւոր... քահանայի Մեսրոպ անուն զրոց աշակերտի. յիշատակ նորին օրհնութեամբ եղիցի, ամէն։

Յիշատակարանս կը շարունակէ նոր գրագրով այսպէս. «Արդ այսպիսում լուսազարդ տառիս ցանկացող եղև... աստուածատէր Ղաւապէկն... ետ գրել զսուրբ գիրքս յիշատակ իւր և ծնողացն Պատրիկն և մօրն Անապին և եղբարցն Մէլուսմին, Զաւլապին, Ղարամին և քերցն Սալվարին, Դառլանին, որդւոյն Աստուածատուրին, որ առ Քրիստոս նն հանգուցեալ... Արդ եղև աւարտ սրբոյ մատենիս յայտմաւուր կողեցեալ ի թուականութեանս Հայոց ՌՃ և Խ ամին և ի թաւաւորութեանս Պարսից Եահ Ուլէյմանին, և ի հայրապետութեան Աղուանից տէրանցն Սիմոնի և Երեմիայի սրբազան կաթողիկոսացն, և ի եպիսկոպոսութեան երկրիս Եամախու և Շիրվանայ Տեառն այլ սոսայ վարդապետաց վարդապետի։ Փանկի այլ Վլաս վարդապետ... բերել հոս զսա ի յերկրէն Արարատու...»

«Գծագրեցաւ սուրբ գիրքս ի յերկրիս Գանշայ ի գեօղս Քարահատ ընդ հովանեաւ Աստուածածին և նորաշէն տաճարիս ձեռամբ... Ղազար սարկաւազի»։

Ո. Կ.